Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
սեպտեմբերի 27-ի N 1026-Լ որոշման

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ֆիզիկական կուլտուրան և սպորտը հայ ժողովրդի մշակույթի անբաժանելի մասն են: Սոցիալական գործոնների ընդհանուր համակարգում դրանք հասարակության կողմից օգտագործվում են մարդու հոգևոր և ֆիզիկական բազմակողմանի զարգացման, առողջության ամրապնդման, հիվանդությունների կանխարգելման, առողջ ապրելակերպի ձևավորման, բնակչության ակտիվ հանգստի կազմակերպման գործընթացում:

2. Սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված՝ բնակչության շրջանում նկատվում է ֆիզիկական զարգացման և պատրաստականության, կյանքի տևողության ցուցանիշների անկում: Դրան զուգահեռ ավելանում են հիվանդությունների, հաշմանդամության ցուցանիշները: Նշվածը վկայում է, որ կան համալիր հիմնախնդիրներ, որոնց շարքում նաև՝ լուծման կարիք ունեցող ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խնդիրները:

3. Արդյունավետ չի գործում ըստ բնակության վայրի իրականացվող ֆիզկուլտուրային-առողջարարական ավանդական համակարգը, նվազել է ոլորտի մասնագետների թիվը: Լուրջ խնդիրներ են առաջացել մարզական կառույցների շինարարության, շահագործման և վերանորոգման գործընթացում:

4. Ծրագրում նախանշված են հիմնական գերակայությունները, կոնկրետ միջոցառումներն ու դրանց կատարման ժամկետները, իրագործման ուղիներն ու ակնկալվող արդյունքները, ֆինանսավորման աղբյուրն ու չափը:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5. Ֆիզիկական կուլտուրան և սպորտը յուրատեսակ միջոց են առողջության պահպանման և ամրապնդման համար, որոնք խթանում են համընդհանուր մարդկային արժեքների համակարգի ձևավորման և անհատի բարոյակամային որակների զարգացումը: Նշվածը իրականացնելու համար անհրաժեշտ է համակցված միջոցառումների համակարգ, որը պայմաններ կստեղծի մարդկանց առօրյա կյանքում ֆիզիկական կուլտուրայի արմատավորման և բնակչության առողջության մակարդակի բարձրացման համար:

6. Ծրագիրը նախատեսված է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական քաղաքականության իրականացման համար:

3. ԾՐԱԳՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Բնակչության ֆիզիկական զարգացումը և ֆիզիկական պատրաստականությունը, որոնք ներառում են դպրոցականների, սովորողների, զինծառայողների ֆիզիկական պատրաստականությունը, ըստ բնակության վայրի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը, հաշմանդամների ֆիզիկական և հոգևոր վերականգնումը:

8. Սպորտի զարգացումը, որը ներառում է մանկապատանեկան սպորտը և մարզական հերթափոխի պատրաստումը, ինչպես նաև ազգային ավանդական մարզաձևերի զարգացումը և տարածումը, այդ թվում նաև՝ հաշմանդամային սպորտը:

9. Բարձրագույն նվաճումների սպորտը: Օլիմպիական գաղափարների տարածումը: Դոպինգի դեմ պայքարի հսկողության ուժեղացումը: Մարզական արդյունքների բարելավումը:

10.Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նյութատեխնիկական բազայի ցանցի զարգացումն ու ամրապնդումը, ինչպես նաև բուժսպասարկման կատարելագործումը:

4. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

11. Ծրագրի նպատակը սոցիալ-տնտեսական նոր պայմաններում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների հիմնադրույթների համաձայն հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը և նրա արդյունավետ գործունեության համար պայմանների ստեղծումն է 2019 թվականի ընթացքում:

12. Ծրագրի խնդիրներն են՝

1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման սոցիալական առաջնայնության ապահովման համար իրավական և տնտեսական մեխանիզմի մշակումն ու իրագործումը,

2) բնակչության ֆիզիկական դաստիարակության համակարգի արդյունավետ գործունեության բարձրացման և զարգացման համար պայմանների ստեղծումը,

3) բնակչության առողջացման, ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստականության մակարդակի բարձրացումը,

4) օլիմպիական և պարալիմպիկ խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին և այլ խոշոր միջազգային մրցաշարերին մասնակցելու համար մարզիկների և մարզաձևերի ազգային հավաքական թիմերի արդյունավետ նախապատրաստման և մասնակցության ապահովումը,

5) կադրերի պատրաստման համակարգի կատարելագործումը և ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի նյութատեխնիկական բազայի զարգացումը,

6) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում միջազգային կապերի ընդլայնումը,

7) ոլորտի գործունեության և զարգացման կառավարման համակարգի կատարելագործումը:

5. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

13. Ակնկալվող արդյունքներն են՝

1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նկատմամբ բնակչության վերաբերմունքի ձևավորումը,

2) բնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, աշխատունակության բարձրացումը և երկարակեցության ապահովումը,

3) բարձրակարգ մարզիկների պատրաստումը, միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի և մարզիկների մասնակցության ապահովումը, ինչպես նաև օլիմպիական և պարալիմպիկ խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում հայ մարզիկների կողմից բարձր նվաճումների հասնելը,

4) հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը:

14. Ծրագիրը նախատեսում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման միջոցառումների ու գործունեության հիմնական ուղիները:

6. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

15. Ֆինանսավորման հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն է:

ՑԱՆԿ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

№	**Ծրագրի և միջոցառման անվանումը**	**Նպատակը և ակնկալվող արդյունքը**	**Հիմնախնդիրները**	**Ժամկետը**	**Ֆինանսավորման չափը (հազար դրամ)**	**Ֆինանսավորման աղբյուրը**	**Կատարողը**
1	***«Մասսայական սպորտ»*** «ՀՀ մարզերում և ԱՀ-ում հանրապետական մարզական փառատոների անցկացում»	Ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականացում Հայաստանի Հանրապետության մարզերում և Արցախում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների դերի բարձրացում	Բնակչության շրջանում ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովում, առողջ ապրելակերպի արմատավորում, երիտասարդությանը մարզական խմբակներում ընդգրկում, համայնքներում ֆիզկուլտուրայի օրերի անցկացման ավանդույթի վերականգնում, անհատի ներդաշնակ զարգացում և աշխատունակության բարձրացում, առողջ ապրելակերպի ձևավորում	3-րդ եռամսյակ	6,960.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

2	***«Մասսայական սպորտ»*** ««Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի կազմակերպում և անցկացում»	Անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, բնակչության առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում:	Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆիզկուլտուրայի և սպորտի ուղղությամբ կատարվող աշխատանքների խթանում, բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով ընտանեկան կապերի ամրապնդում և առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում, հաշմանդամային սպորտի զարգացման խթանում, սոցիալական հավասարության խթանում, հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում	2-րդ և 3-րդ եռամսյակ	77,745.8	<< պետական բյուջե	<< սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

3	«***Մասսայական սպորտ»*** «Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում»	Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորում, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ և Հայաստանի Հանրապետության ազգային բանակում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում	Ավագ տարիքի դպրոցականների ֆիզիկական պատրաստականության մոնիտորինգի անցկացում, դպրոցականների և երիտասարդության շրջանում իրականացվող ռազմահայրենասիրական դաստիարակության և զանգվածային մարզական աշխատանքների հետագա բարելավում	3-րդ և 4-րդ եռամսյակ	7,000.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
4	***«Մասսայական սպորտ»*** ««Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում»	Հաշմանդամություն ունեցող անձանց առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ հանգստի կազմակերպում	Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, հաշմանդամային սպորտի մասսայականացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում և հասարակությանը նրանց լիարժեք ինտեգրում, ակտիվ կենսակերպը հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում արմատավորելու	3-րդ եռամսյակ	16,945.3	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

			նպատակով զանգվածային լրատվամիջոցների հետ աշխատանքի կազմակերպում				
5	***«Մասսայական սպորտ»*** ««Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացում»	Անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, նախադպրոցական տարիքի երեխաների առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում	Ֆիզիկական վարժությունների միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում շարժողական ունակությունների ձևավորում, առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի գաղափարի ձևավորում, նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում, նախադպրոցական տարիքի երեխաների համար ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում, նախադպրոցական հաստատություններում և նախակրթարաններում (այսուհետ՝ Հաստատություն) ֆիզկուլտուրային,	2-րդ եռամսյակ	19,574.7	<< պետական բյուջե	<< սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

			առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման աշխատանքների խթանում				
6	***«Մասսայական սպորտ»*** «Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթի անցկացում»	Հայաստանի Հանրապետությունում գործող բնակչության սոցիալական պաշտպանության երեխաների ընդհանուր տիպի, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների (այսուհետ՝ հաստատություն) երեխաների շրջանում ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականացում	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնարավորությունների օգտագործում հաստատությունների երեխաների դաստիարակության և առողջության ամրապնդման գործընթացում, հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դերի կարևորում, ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպում	2-րդ եռամսյակ	4,975.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
7	«***Մասսայական սպորտ»*** «Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացում»	Ուսանողության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորում, ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում, որը կնպաստի բարձրագույն ուսումնական հաստատություններում ֆիզիկական կուլտուրայի	Ուսանողների շրջանում ֆիզիկական պատրաստվածության բարելավում, նրանց աշխատունակության բարձրացում, առողջության ամրապնդում,առողջ կենսակերպի արմատավորում և մարզական-մասսայական միջոցառումներին	3-րդ եռամսյակ	20,349.9	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

		և սպորտի դերի բարձրացմանը, ուսանողների բազմակողմանի և ներդաշնակ զարգացմանը, առողջ ապրելակերպի ձևավորմանը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով առողջ կենսակերպի արմատավորմանը, ազատ ժամանցի արդյունավետ կազմակերպմանը	ուսանողության ներգրավում				
8	«***Մասսայական սպորտ»*** «ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԱՀ հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադայի անցկացում»	Հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների շրջանում առողջ ապրելակերպի արմատավորում, ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում	Աշակերտների շրջանում ֆիզիկական պատրաստվածության բարելավում, նրանց աշխատունակության բարձրացում, առողջության ամրապնդում, առողջ կենսակերպի արմատավորում և մարզական-մասսայական միջոցառումներին բարձր դասարանների աշակերտների ներգրավում	3-րդ եռամսյակ	31,000.7	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

9	«***Մասսայական սպորտ***» «ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԱՀ հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացում»	Անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, դպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում:	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդում, նրանց ֆիզիկական որակների բարելավում, դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում,դպրոցական տարիքի երեխաների համար ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում, հանրակրթական դպրոցներում ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման խթանում	1-ին և 2-րդ եռամսյակ	28,773.4	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

10	«***Մասսայական սպորտ»*** «ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացում»	Բնակչության առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, մարզերի գյուղական բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում	Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆիզկուլտուրայի և սպորտի ուղղությամբ կատարվող աշխատանքների խթանում, բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, մարզերում գյուղական բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում	3-րդ եռամսյակ	6,028.1	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
11	«***Մասսայական սպորտ»*** «Պետական մարմինների աշխատողների միջև հրաձգության հանրապետական մրցույթի անցկացում»	Աշխատակիցների շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական ու մարզական աշխատանքների ակտիվացում, հրաձգություն մարզաձևի նկատմամբ հետաքրքրության սերմանում, զենքի ճիշտ	Աշխատակիցների շրջանում տարվող ֆիզկուլտուրային-առողջարարական ու մարզական աշխատանքների աշխուժացումը, նրանց ֆիզիկական պատրաստականության բարելավում, աշխատակիցների շրջանում սպորտի մասսայականացում	1-ին եռամսյակ	700.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

		օգտագործման, դրա հետ ճիշտ վարվելու, արագ կողմնորոշվելու ունակությունների և հմտությունների զարգացում, հրաձգություն մարզաձևի մասսայականացում աշխատակիցների շրջանում, որը կնպաստի պետական մարմիններում աշխատակիցների շրջանում հրաձգություն մարզաձևի նկատմամբ հետաքրքրության սերմանելուն, զենքի ճիշտ օգտագործման, դրա հետ ճիշտ վարվելու, արագ կողմնորոշվելու ունակությունների և հմտությունների զարգացմանը, աշխատակիցների շրջանում հրաձգություն մարզաձևի մասսայականացմանը:					

12	«***Մասսայական սպորտ»*** «Տարեցների հանրապետական խաղերի անցկացում»	Տարեց բնակչության առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, տեղերում բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում	Տարեց բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, սոցիալական հավասարության խթանում, սպորտի մասսայականացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում և հասարակությանը նրանց լիարժեք ինտեգրում	3-րդ եռամսյակ	9,335.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
13	***«Մասսայական սպորտ»*** «Ուսանողական մարզական միջոցառումներ»	Ուսանողության շրջանում առողջ կենսակերպի արմատավորում և մարզական-մասսայական միջոցառումներին ուսանողության ներգրավում, ուսանողությանը մշտական գործող մարզասեկցիաներում ներգրավելու միջոցով նրանց ֆիզիկական կարողությունների կատարելագործմանը և առողջության ամրապնդմանը նպաստում, լավագույն	Բարձրագույն ուսումնական հաստատությունների մարզական ակումբների գործունեության ակտիվացում, մարզական արդյունքների բարելավում և առողջ ապրելակերպի քարոզում	2-րդ եռամսյակ	4,096.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն

		ուսանող մարզիկների բացահայտում					
14	***«Մասսայական սպորտ»*** «Աջակցություն համայնքներին մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավման համար»	ՀՀ համայնքներում մարզական օբյեկտների շենքային պայմանների բարելավում, գոյություն ունեցող շենքային ֆոնդի պահպանում կամ նոր մարզական օբյեկտների շենքերի (մասնաշենքերի) կառուցում և նախագծում	գ. Այգեձորի համայնքային նշանակության նոր մարզադահլիճի շինարարական աշխատանքներ, Էջմիածին քաղաքի մարզադպրոցի կառուցման շինարարական աշխատանքներ	Տարվա ընթացքում	41,412.1	ՀՀ պետական բյուջե	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
15	***«Մասսայական սպորտ»*** «Մարզական օբյեկտների շինարարություն»	Բնակչության առողջության ամրապնդում, անհատի ներդաշնակ զարգացում, առողջ ապրելակերպի ապահովում	Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի շինարարական աշխատանքների ավարտում	Տարվա ընթացքում	428,587.9	ՀՀ պետական բյուջե	ՀՀ քաղաքաշինության կոմիտե

16	***«Մեծ նվաճումների սպորտ»*** «ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում»	ՀՀ առաջնությունների անցկացման ապահովում: Համաշխարհային պատանեկան օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին ու վարկանիշային միջազգային մրցաշարերին լավագույն ձևով նախապատրաստվելու նպատակով ուսումնամարզական հավաքների կազմակերպում: Աշխարհի և Եվրոպայի առաջնություններում մրցանակային տեղեր գրավելով՝ ՀՀ մարզական հեղինակության բարձրացման ապահովում: ՀՀ առաջնությունների քանակի ավելացում, օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, վարկանիշային միջազգային մրցաշարերին լավագույն	Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում մրցանակային տեղեր գրավում և Հայաստանի մարզական միջազգային հեղինակության բարձրացում	Տարվա ընթացքում	1,139,967.2	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

		ձևով մասնակցելու նպատակով ուսումնամարզական հավաքների քանակի ավելացում, միջազգային տարբեր պաշտոնական և ոչ պաշտոնական մրցաշարերին մասնակցության ավելացում:					
17	***«Մեծ նվաճումների սպորտ»*** «ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովում»	Եվրոպայի, աշխարհի առաջնություններին մասնակցող Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի անդամներին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովում: ՀՀ հավաքական թիմերի Եվրոպայի, աշխարհի առաջնություններին պատշաճ ձևով ներկայացում	Հանրապետության հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովում	1-ին եռամսյակ	81,840.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

18	***«Մեծ նվաճումների սպորտ»*** «Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ»	Հաշմանդամային սպորտի զարգացման խթանում, ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու, առողջ կենսակերպի գաղափարի արմատավորում, սոցիալական հավասարության խթանում, մարմնակրթական և այլ ընդհանուր հետագա գործունեության զարգացում և իրագործում, հաշմանդամների տարբեր խմբերի անձանց հասարակություն ինտեգրման գործընթացի խթանում, հաշմանդամների շրջանում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում, ինչպես նաև հաշմանդամների միջազգային մարզական կազմակերպություններում հաշմանդամային սպորտով զբաղվող հասարակական	Հաշմանդամների ինտեգրում հասարակությանը	1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակներ	9,000.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

		կազմակերպությունների ինտեգրման գործընթացի խթանում: Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացում, առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի արմատավորում, զանգվածային-մարզական և ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների օրացուցային պլանի կենսագործման ապահովում, ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու համար հնարավորությունների ընձեռում, սոցիալական հավասարության և հաշմանդամների տարբեր խմբերի հասարակությանը ինտեգրման գործընթացի խթանում՝ հաշմանդամություն					

		ունեցող անձանց համար բարենպաստ պայմանների ստեղծում հասարակության մեջ նրանց ներառումն ապահովելու (ամբողջական դարձնելու) համար, հաշմանդամների շրջանում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում, հաշմանդամային սպորտի զարգացում, պարապողների մարզական վարպետության կատարելագործում:					
19	***«Մեծ նվաճումների սպորտ»*** «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայություններ»	Մարզիկների ուսումնամարզական գործընթացի և հակադոպինգային ուսումնասիրությունների ուղղությամբ տարվող աշխատանքների բարելավում	Մասնագիտական խոր գիտական հետազոտությունների արդյունքում մարզիկների ֆունկցիոնալ հնարավորությունների հայտնաբերում	Տարվա ընթացքում	118,744.1	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
20	***«Մեծ նվաճումների սպորտ»*** **«**Աջակցություն հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացմանը»	Մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության ամրապնդում, առողջ ապրելակերպի դաստիարակում, ազգային մարզաձևերի	Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի պահպանում, տարածում և զարգացում:	Տարվա ընթացքում	13,022.2	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

		պահպանում:					
21	***«Մեծ նվաճումների սպորտ»*** «Նավամոդելային սպորտի զարգացում»	Նավամոդելային սպորտի զարգացում, նավամոդելային սպորտի 2019 թ. աշխարհի առաջնությանը մասնակցություն, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին ՀՀ ազգային հավաքականի (համալրված նաև աշխարհի և Եվրոպայի չեմպիոններով) մասնակցություն, ներկայացում և փորձի փոխանակում	ՀՀ ազգային հավաքականի մասնակցություն աշխարհի և Եվրոպայի առաջնություններին: Մարզական արդյունքների բարելավում:	2-րդ եռամսյակ	5,178.7	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
22	***«Մեծ նվաճումների սպորտ»*** Շախմատիստների պատրաստման ծառայություններ»	Հայաստանում շախմատի զարգացմանն ու ծավալմանը նպաստում, շախմատային դպրոցների, ակումբների և խմբակների նյութատեխնիկական ապահովման ընդլայնում, շախմատային կյանքի տարածմանն ու լուսաբանմանը	ՀՀ տարածքում շախմատի զարգացում, տաղանդավոր երեխաների բացահայտում, կրթում, մարզիչների վերապատրաստում, շախմատի մասսայականացում ՀՀ-ում և ԱՀ-ում	Տարվա ընթացքում	145,449.6	ՀՀ պետական բյուջե	ՀՀ կառավարություն

		աջակցում, միջազգային նմանատիպ կազմակերպությունների հետ գործունեության կազմակերպում					
23	***«Մեծ նվաճումների սպորտ»*** Շախմատի մրցույթների պատրաստման ծառայություններ»	Շախմատի զարգացումը ՀՀ-ում, ուսումնամարզական գործընթացի իրականացում՝ տարբեր տարիքային խմբերի առաջատար շախմատիստների մարզական վարպետությունը բարձրացնելու ուղղությամբ, հանրապետության շախմատային ակումբների և կենտրոնների գործունեության համակարգում:	Շախմատի մասսայականացում	Տարվա ընթացքում	16,535.8	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

24	***«Մեծ նվաճումների սպորտ»*** «2020 թվականին Լոզանում կայանալիք 3-րդ ձմեռային պատանեկան օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցություն»	Երիտասարդ խոստումնալից մարզիկների բացահայտում, օլիմպիական գաղափարների տարածում, մրցակցական փորձի ձեռքբերում, Հայաստանի մարզիկների մասնակցություն երրորդ պատանեկան ձմեռային օլիմպիական խաղերին: Եվրոպայի, աշխարհի առաջնություններին մասնակից Հայաստանի հավաքական թիմերի համալրում: Հայաստանի հավաքական թիմի համալրում բարձրակարգ խոստումնալից մարզիկներով:	Հայաստանի մարզիկների մասնակցություն 3-րդ պատանեկան օլիմպիական խաղերին, մարզական արդյունքների բարելավում	4-րդ եռամսյակ	15,164.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

25	***«Մեծ նվաճումների սպորտ»*** «2020 թվականին Տոկիոյի 32-րդ օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության նախապատրաստում և մասնակցություն»	2020 թվականի Տեկիոյի 32-րդ օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցությանն նախապատրաստման ապահովում	Հայաստանի մարզիկների մասնակցության ապահովում 32-րդ օլիմպիական խաղերին	1-ին եռամսյակ	27,869.3	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
26	***«Մեծ նվաճումների սպորտ»*** «2-րդ եվրոպական օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում»	Հայաստանի մարզիկների մասնակցության ապահովում 2019 թվականին կայանալիք եվրոպական օլիմպիական խաղերին, երիտասարդ, խոստումնալից մարզիկների բացահայտում, օլիմպիական գաղափարների տարածում, մրցակցական փորձի ձեռքբերում: Եվրոպայի, աշխարհի առաջնություններին 2020 թվականին կայանալիք օլիմպիական խաղերի մասնակից Հայաստանի հավաքական թիմերի համալրում բարձրակարգ	Հայաստանի մարզիկների մասնակցություն ամառային 2-րդ եվրոպական խաղերին: Մարզական արդյունքների բարելավում:	1-ին եռամսյակ	31,651.3	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

		խոստումնալից մարզիկներով					
27	***«Մեծ նվաճումների սպորտ»*** «Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոներին մասնակցության ապահովում»	Հայաստանի մարզիկների մասնակցության ապահովում 2019 թ. Եվրոպայի երիտասարդության ամառային և ձմեռային օլիմպիական փառատոներին, երիտասարդ խոստումնալից մարզիկների բացահայտում, օլիմպիական գաղափարների տարածում, մրցակցական փորձի ձեռքբերում, հավաքական թիմերի համալրում բարձրակարգ խոստումնալից մարզիկներով	Ուսումնամարզական հավաքների կազմակերպում: Դոպինգի դեմ պայքարի հսկողության ուժեղացում:	1-ին և 2-րդ եռամսյակներ	20,009.3	<< պետական բյուջե	<< սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

28	***«Մեծ նվաճումների սպորտ»*** «2019 թվականին Բելառուսում կայանալիք խուլերի ըմբշամարտի Եվրոպայի առաջնությանը Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցություն»	Եվրոպայի առաջնությանը հանրապետության լսողական խնդիրներ ունեցող անձանց (մարզիկների) մասնակցությանն աջակցում, հաշմանդամային սպորտում բարձր մարզական արդյունքների ձեռքբերում, առողջ ապրելակերպի և մրցակցային գաղափարների տարածում: Բելառուսում կայանալիք խուլերի ըմբշամարտի Եվրոպայի առաջնությանը ՀՀ մարզական պատվիրակության մասնակցության ապահովում, սպորտի՝ որպես միջազգային ասպարեզում մեր երկրի ճանաչման հավելյալ միջոցի կարևորում, Հայաստանի հեղինակության բարձրացում, հաշմանդամություն ունեցող անձանց համար	Լսողական խնդիրներ ունեցող անձանց (մարզիկների) Հայաստանի Հանրապետության հավաքական թիմի մասնակցություն Եվրոպայի առաջնությանը	4-րդ եռամսյակ	8,812.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

		բարենպաստ պայմանների ստեղծում, հասարակության մեջ նրանց ներառումն ապահովելու (ամբողջական դարձնելու) համար հաշմանդամների շրջանում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում, հաշմանդամային սպորտի զարգացում, մարզիկների մարզական վարպետության կատարելագործում					
29	***«Մեծ նվաճումների սպորտ»*** «Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնում»	Դրամական պարգևներ շնորհելու միջոցով մարզիչների և մարզիկների նյութական խրախուսում և սոցիալական վիճակի բարելավում, օլիմպիական խաղերին, աշխարհի, Եվրոպայի առաջնություններին և միջազգային մրցաշարերին հաղթողների և մրցանակակիրների նյութական խրախուսում	Միջազգային մրցումներին մասնակցության արդյունքների բարելավում	4-րդ եռամսյակ	150,000.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

		ըստ արդյունքների					
30	***«Մեծ նվաճումների սպորտ»*** «ՀՀ հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների վարձատրություն և աշխարհի չեմպիոններին պատվովճարի հատկացում»	Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզումների արդյունավետության բարձրացում, Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզիչների աշխատավարձերի վճարում, վերջիններիս ոցիալական պայմանների բարելավում և մարզական արդյունքների բարձրացում:	ՀՀ հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների և աշխարհի չեմպիոնների սոցիալական պայմանների բարելավում	Տարվա ընթացքում	47,898.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
31	***«Մեծ նվաճումների սպորտ»*** «Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ վարչապետի անվանական թոշակի հատկացում»	Օլիմպիական խաղերում, աշխարհի, Եվրոպայի առաջնություններում, միջազգային մրցումներում մրցանակային տեղերի նվաճում, անձնական արդյունքների բարելավում: Օլիմպիական խաղերի մասնակցության համար վարկանիշների ձեռքբերում, աշխարհի,	Շահառուների սոցիալական պայմանների բարելավում	Տարվա ընթացքում	157,000.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

		Եվրոպայի և ՀՀ ռեկորդների բարելավում:					
32	***«Մեծ նվաճումների սպորտ»*** «Հակադոպինգային համաշխարհային գործակալությանը անդամակցում»	Նպաստում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության միջոցով իրականացվող ծրագրերի բարձր արդյունքների ապահովմանը:	Դոպինգի դեմ պայքարի հսկողության ուժեղացում	1-ին եռամսյակ	4,440.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
33	***«Մեծ նվաճումների սպորտ»*** «Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցում»	Նպաստում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության միջոցով իրականացվող ծրագրերով նախատեսված արդյունքների ապահովմանը	Ինտեգրում եվրոպական պետությունների ընտանիքին	1-ին եռամսյակ	3,724.2	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ